ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆԻ

«---» ---------- 2018թ. **N------Ա**

ՈՐՈՇՈՒՄ

ՍԵՐԳԵՅ ՄԵՐԳԵԼՅԱՆԻ ՀԻՇԱՏԱԿԸ ՀԱՎԵՐԺԱՑՆՈՂ ՀՈՒՇԱՏԱԽՏԱԿԻ ՏԵՂԱԴՐՄԱՆ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 1999 թվականի օգոստոսի 31-ի «Հայաստանի Հանրապետությունում պետական և հասարակական նշանավոր գործիչներին նվիրված հուշարձանների իրականացման կարգը հաստատելու մասին» N 551 որոշմամբ հաստատված կարգի 2-րդ կետը՝

Երևան քաղաքի ավագանին որոշում է.

Տալ համաձայնություն ակադեմիկոս Սերգեյ Մերգելյանի հիշատակը հավերժացնող հուշատախտակը Երևանի մաթեմատիկական մեքենաների գիտահետազոտական ինստիտուտի շենքի պատին /Հակոբ Հակոբյան փողոց հ. 3/ փակցնելու համար:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ – ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«ՍԵՐԳԵՅ ՄԵՐԳԵԼՅԱՆԻ ՀԻՇԱՏԱԿԸ ՀԱՎԵՐԺԱՑՆՈՂ ՀՈՒՇԱՏԱԽՏԱԿԻ ՏԵՂԱԴՐՄԱՆ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Ակադեմիկոս Սերգեյ Մերգելյանը ծնվել է 1928թ. մայիսի 19-ին Սիմֆերոպոլում: 1947թ. ավարտել է Երևանի համալսարանը, 1949թ.՝ ՍՍՀՄ ԳԱ Վ. Ստեկլովի անվան մաթեմատիկական ինստիտուտի ասպիրանտուրան: 1949թ. Սերգեյ Մերգելյանին շնորհվել է գիտությունների դոկտորի, 1952թ.՝ պրոֆեսորի, 1956թ՝. ՀՍՍՀ ԳԱ ակադեմիկոսի կոչումներ: 1953թ. եղել է ՍՍՀՄ ԳԱ թղթակից անդամ:

1956թ. Սերգեյ Մերգելյանը հիմնադրել է Երևանի մաթեմատիկական մեքենաների գիտահետազոտական ինստիտուտը, մինչև 1960թ. եղել է ինստիտուտի տնօրեն: 1962-1965թթ. և 1971-1979թթ. ղեկավարել է ՀԽՍՀ ԳԱ և ԵՊՀ միացյալ հաշվողական կենտրոնը:

1963-1971թթ. եղել է ԽՍՀՄ ԳԱ մաթեմատիկական բաժանմունքի ակադեմիկոս քարտուղարի տեղակալ և ԽՍՀՄ ԳԱ Վ. Ստեկլովի անվան մաթեմատիկական ինստիտուտի կոմպլեքս փոփոխականի ֆունկցիաների տեսության բաժնի վարիչ, 1971-1974թթ.՝ ՀԽՍՀ ԳԱ փոխնախագահ, Գիտությունների ակադեմիայի և Երևանի պետական համալսարանի հաշվողական կենտրոնի հիմնադիրն ու առաջին տնօրենը, ԵՊՀ-ի ֆիզիկամաթեմատիկական ֆակուլտետի ամբիոնի վարիչը:

1972-1979թթ. ղեկավարել է ԵՊՀ թվային անալիզի ամբիոնը, 1979-1982թթ.՝ ՀԽՍՀ ԳԱ մաթեմատիկայի ինստիտուտի կոմպլեքս անալիզի բաժինը: 1982-1986թթ. եղել է Կիրովականի (այժմ՝ Վանաձոր) պետական մանկավարժական ինստիտուտի ռեկտոր:

1952թ. Սերգեյ Մերգելյանին շնորհվել է ՀՍՀՄ Պետական մրցանակ: Պարգևատրվել է Աշխատանքային կարմիր դրոշի, 2008թ. «Սուրբ Մեսրոպ Մաշտոց» շքանշաններով:

Սերգեյ Մերգելյանը մահացել է 2008թ. օգոստոսի 20-ին Լոս Անջելեսում:

Ակադեմիկոս Սերգեյ Մերգելյանի հիշատակը հավերժացնող հուշատախտակը Երևանի մաթեմատիկական մեքենաների գիտահետազոտական ինստիտուտի շենքի պատին /Հակոբ Հակոբյան փողոց հ. 3/ փակցնելու վերաբերյալ միջնորդություն է ներկայացվել ՀՀ ԳԱԱ նախագահ Ռ. Մարտիրոսյանի կողմից:

Հաշվի առնելով վերոգրյալը և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 1999 թվականի օգոստոսի 31-ի «Հայաստանի Հանրապետությունում պետական և հասարակական նշանավոր գործիչներին նվիրված հուշարձանների իրականացման կարգը հաստատելու մասին» N 551 որոշմամբ հաստատված կարգի 2-րդ կետը՝ Երևան քաղաքի ավագանու քննարկմանն է ներկայացվում սույն որոշման նախագիծը:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ

«ՍԵՐԳԵՅ ՄԵՐԳԵԼՅԱՆԻ ՀԻՇԱՏԱԿԸ ՀԱՎԵՐԺԱՑՆՈՂ ՀՈՒՇԱՏԱԽՏԱԿԻ ՏԵՂԱԴՐՄԱՆ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԵՐԵՎԱՆԻ ԲՅՈՒՋԵՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ/ԿԱՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Սերգեյ Մերգելյանի հիշատակը հավերժացնող հուշատախտակի տեղադրման մասին» որոշման նախագծի ընդունման կապակցությամբ Երևանի բյուջեում լրացումներ և/ կամ փոփոխություններ կատարելու անհրաժեշտություն չի առաջանում։

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ

«ՍԵՐԳԵՅ ՄԵՐԳԵԼՅԱՆԻ ՀԻՇԱՏԱԿԸ ՀԱՎԵՐԺԱՑՆՈՂ ՀՈՒՇԱՏԱԽՏԱԿԻ ՏԵՂԱԴՐՄԱՆ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԱՅԼ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ/ԿԱՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Սերգեյ Մերգելյանի հիշատակը հավերժացնող հուշատախտակի տեղադրման մասին» որոշման նախագծի ընդունման կապակցությամբ այլ իրավական ակտերում լրացումներ և/կամ փոփոխություններ կատարելու անհրաժեշտություն չի առաջանում։

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ